/ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/13, 29.01.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Արտ Սիթի» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ Արարատի մարզի «Մխչյան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ՄՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1 ծածկագրով գնանշման հարցում / սննդամթերքի ձեռքբերում.

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 23.01.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 3-րդ կետով Ընկերության հայտը մերժելու մասին կայացած որոշումը:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

<<ԱՐՏ ՍԻԹԻ>>

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

24.01.2019թ

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ
հասցե՝ ՀՀ Արարատի մարզ գ. Մխչյան
հեռ՝ 099033539
էլ. փոստ՝ avag-kirakosyan@mail.ru, hayk_khazaryan@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ Արարատի մարզի «ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ
հասցե՝ ՀՀ Արարատի մարզ գ. Մխչյան, փ. Ստեփանյան շենք 41/1

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՄՄ-ԳՀԱՊՁԲ-ՄՆՈՒՆԴ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ

Բողոք

Գործի հակիրճ նկարագրությունը և փաստերը.

«ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է ՄՄ-ԳՀԱՊՁԲ-ՄՆՈՒՆԴ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում սննդամթերքը:

Ընթացակարգի հայտերի բացումը տեղի ունեցել 2018թ դեկտեմբերի 18-ին ժամը 12:30-ին:

Ի թիվս այլ ընկերությունների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԱՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համապատասխան որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, այնուհետ հարցում է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 10.01.2019թ տրամադրված եզրակացության (այսուհետ՝ եզրակացություն) համաձայն Ընկերությունը ունի 53000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Մուտքագրված
Գրանցման N 3111-19

Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է 24.01.2019թ-ին:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումը

Ընկերության հայտը մերժվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Ընկերությունը հայտը ներյացնելիս առաջնորդվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունով, համաձայն որի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը որևէ հարկային պարտավորություն չի ունեցել:

Ընկերության կողմից ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ այդ պարտավորությունները վերաբերում են <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարներին, որոնց մասին Ընկերությունը հարկային մարմի կողմից որևէ իրազեկում չի ստացել և այդ տեղեկությունը կարող էր ձեռք բերել միայն Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն սահմանված վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Ընկերությունը գտնում է, որ պետք է վերականգնվի նրա հետագա մասնակցությունը գնման գործընթացին, քանի որ դրա դադարեցումը պայմանավորված է եղել հարկային մարմի կողմից իրազեկված չլինելու հանգամանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձից

Խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 23.01.2019թ ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 3-րդ կետով Ընկերության հայտը մերժելու մասին կայացրած որոշումը:
2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգի շրջանակներում պամանագիր կնքելու մասին կայացված որոշումը:
3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

Կից ներկայացվում է՝

1. ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկանք (բնօրինակ)՝ 1 թերթ
2. Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի պատճեն՝ 2 թերթ
3. Բողոքը ներկայացնելու համար պահանջվող վճարը հավաստող փաստաթուղթ (Վճարման հանձնարարագրի անդորրագրի բնօրինակ)՝ 1 թերթ

Տնօրեն

Ա. Կիրակոսյան